Կ-1013-21.02.2025-ՊԱ-011 Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՄԱՍՆԱՎՈՐ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» 2012 թվականի փետրվարի 9-ի ՀՕ-6-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասը 10-րդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«կայուն պահակետով պահպանություն՝ անմիջականորեն պահնորդի կողմից, ոչ ահազանգման համակարգի միջոցով, իրականացվող պահպանություն:»:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) սեփականության կամ օրինական տիրապետման ներքո գտնվող օբյեկտների, անշարժ և շարժական գույքի, տարածքի՝ կայուն պահակետով կամ տեսահսկման և ահազանգման համակարգերի միջոցով պահպանությունը և արագ արձագանքումը.».

2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Պաշտպանվող յուրաքանչյուր անձի տրանսպորտային միջոցով փոխադրումը կարող է իրականացվել միայն մեկ տրանսպորտային միջոցով, որի մեջ կարող է գտնվել երեքից ոչ ավելի թիկնապահ (այդ թվում՝ վարորդ-թիկնապահը): Արգելվում է պաշտպանվող անձին փոխադրող տրանսպորտային միջոցի ուղեկցումը մեկ այլ տրանսպորտային միջոցով:».

3) 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված պահանջները դրանք խախտելու համար օրենքով սահմանված պատասխանատվության կիրառումից հետո մեկ տարվա ընթացքում 2 կամ ավելի անգամ չկատարելը հանգեցնում է տվյալ կազմակերպության լիցենզիայի գործողության դադարեցման՝ ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի (այսուհետ՝ Լիազոր մարմին) կողմից: Սույն հոդվածով սահմանված մյուս պահանջները չկատարելը հիմք

է տվյալ կազմակերպության լիցենզիայի գործողության կասեցման կամ դադարեցման համար:»:

Հոդված 3. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Թիկնապահական և պահնորդական գործունեության լիցենզիայի տրման պարտադիր պայման է հանդիսանում լիցենզիա ստանալու հայտը ներկայացնելու պահի դրությամբ համապատասխան որակավորում ունեցող առնվազն 10 աշխատողի (պահնորդի կամ թիկնապահի) հետ կնքված աշխատանքային պայմանագրերի առկայությունը:».

2) 4-րդ մասում «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ Լիազոր մարմին)» բառերը փոխարինել «Լիազոր մարմինը» բառերով.

3) 5-րդ մասից հանել «լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման,» բառերը:

Հոդված 4. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին հոդվածով.

«Հոդված 8.1. Լիցենզիաների էլեկտրոնային գրանցամատյանը

1. Մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունները հաշվառելու, ոլորտի վիճակի և միտումների վերաբերյալ տեղեկությունները հավաքելու և վերլուծելու, ինչպես նաև ոլորտի քաղաքականությունը մշակելու նպատակով Լիազոր մարմինը վարում է մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունների հաշվառման էլեկտրոնային գրանցամատյան, որտեղ նշվում են.

1) լիցենզավորված իրավաբանական անձի անվանումը և գտնվելու (գործունեություն ծավալելու) վայրը.

2) լիցենզիայի համարը.

3) լիցենզիան տալու ամսաթիվը և գրանցման համարը.

4) գործունեության կոնկրետ տեսակը, որի իրականացման համար տրվել է լիցենզիա.

5) տեղեկություններ՝ տրված լիցենզիայի վերաձևակերպման, գործողության կասեցման կամ դադարեցման մասին.

6) կազմակերպությունում իրականացված ստուգումների վերաբերյալ տեղեկություններ.

7) սույն օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված հաշվետվությամբ նախատեսված այլ տեղեկություններ:»:

Հոդված 5. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում «օգտագործելու» բառից հետո լրացնել «զրահաբաճկոն, սաղավարտ, արցունքաբեր, գրգռիչ գազով ձեռքի սրվակներ,» բառերը:

Հոդված 6. Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Պահնորդի (թիկնապահի) առողջությունը ապահովագրվում է գործատուի հաշվին:»:

Հոդված 7. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 28.1-ին հոդվածով.

«Հոդված 28.1. Մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության գույքային պատասխանատվությունը

1. Մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված գույքային պատասխանատվություն է կրում իր կողմից թույլ տրված խախտման հետևանքով պատճառված իրական վնասի համար:

2. Մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունը պարտավոր է ապահովագրել իր պատասխանատվության ռիսկը:

3. Մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության կողմից իր պատասխանատվության ռիսկի ապահովագրության չափը և ապահովագրության կարգը սահմանվում են Կառավարության որոշմամբ:»:

Հոդված 8. Օրենքի 30-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «ոստիկանությունը» բառը փոխարինել «Լիազոր մարմինը» բառերով.

2) 2-րդ մասում «Ոստիկանությունը» բառը փոխարինել «Լիազոր մարմինը» բառերով, իսկ «իրավական ակտերով» բառերը՝ «օրենքներով» բառով.

3) 3-րդ մասում «ոստիկանությունն» բառը փոխարինել «Լիազոր մարմինն» բառերով, իսկ «(պատվիրատուների համաձայնությամբ)» բառերը փոխարինել «, բացառությամբ բնակարանների և բնակարանին հավասարեցված վայրերի,» բառերով.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ և 5-րդ մասերով.

«4. Մասնավոր պահնորդական կազմակերպությունները յուրաքանչյուր կիսամյակ՝ մինչև կիսամյակին հաջորդող ամսվա 25-ը, Լիազոր մարմնին են ներկայացնում կազմակերպության գործունեության վերաբերյալ հաշվետվություն, որի ձևը և դրանում ներառվող տեղեկությունների ցանկը սահմանվում է Լիազոր մարմնի կողմից:

5. Մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից օբյեկտները պահպանելու կարգը և պայմանները սահմանում է Լիազոր մարմինը:»:

Հոդված 9. Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասում «ոստիկանության» բառը փոխարինել «Լիազոր մարմնի» բառերով:

Հոդված 10.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի և 8-րդ հոդվածի 4-րդ կետի, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո և 7-րդ հոդվածով լրացվող 28.1-ին հոդվածի 2-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հուլիսի 1-ից:

2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը լիցենզիաներ ստացած մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունները լիցենզիաները սույն օրենքի 7-րդ հոդվածով լրացվող 28.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջի մասով մինչև 2026 թվականի օգոստոսի 1-ը, իսկ սույն օրենքով նախատեսված մյուս պահանջների մասով՝ մինչև 2026 թվականի հունվարի 1-ը համապատասխանեցնում են սույն օրենքով նախատեսված պահանջներին: Սույն մասի պահանջները չապահովելու դեպքում լիցենզիաների գործողությունը դադարեցվում է Լիազոր մարմնի կողմից:

3. Սույն օրենքի 6-րդ հոդվածով լրացվող 28.1-ին հոդվածի 3-րդ մասով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում, իսկ սույն օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

~~*Առաջին ընթերցում*~~

Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՄԱՍՆԱՎՈՐ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» 2012 թվականի փետրվարի 9-ի ՀՕ-6-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասը 10-րդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«կայուն պահակետով պահպանություն՝ անմիջականորեն պահնորդի կողմից, ոչ ահազանգման համակարգի միջոցով, իրականացվող պահպանություն:»:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) սեփականության կամ օրինական տիրապետման ներքո գտնվող օբյեկտների, անշարժ և շարժական գույքի, տարածքի՝ կայուն պահակետով կամ տեսահսկման և ահազանգման համակարգերի միջոցով պահպանությունը և արագ արձագանքումը.».

2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Պաշտպանվող յուրաքանչյուր անձի տրանսպորտային միջոցով փոխադրումը կարող է իրականացվել միայն մեկ տրանսպորտային միջոցով, որի մեջ կարող է գտնվել երեքից ոչ ավելի թիկնապահ (այդ թվում՝ վարորդ-թիկնապահը): Արգելվում է պաշտպանվող անձին փոխադրող տրանսպորտային միջոցի ուղեկցումը մեկ այլ տրանսպորտային միջոցով:»÷.

3) 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված պահանջները դրանք խախտելու համար օրենքով սահմանված պատասխանատվության կիրառումից հետո մեկ տարվա

ընթացքում 2 կամ ավելի անգամ չկատարելը հանգեցնում է տվյալ կազմակերպության լիցենզիայի գործողության դադարեցման՝ ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի (այսուհետ՝ Լիազոր մարմին) կողմից: Սույն հոդվածով սահմանված մյուս պահանջները չկատարելը հիմք է տվյալ կազմակերպության լիցենզիայի գործողության կասեցման կամ դադարեցման համար:»:

Հոդված 3. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Թիկնապահական և պահնորդական գործունեության լիցենզիայի տրման պարտադիր պայման է հանդիսանում լիցենզիա ստանալու հայտը ներկայացնելու պահի դրությամբ համապատասխան որակավորում ունեցող առնվազն 10 աշխատողի (պահնորդի կամ թիկնապահի) հետ կնքված աշխատանքային պայմանագրերի առկայությունը:».

2) 4-րդ մասում «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ Լիազոր մարմին)» բառերը փոխարինել «Լիազոր մարմինը» բառերով.

~~2~~ 3) 5-րդ մասից հանել «լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման,» բառերը:

Հոդված 4. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին հոդվածով.

«Հոդված 8.1. Լիցենզիաների էլեկտրոնային գրանցամատյանը

1. Մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունները հաշվառելու, ոլորտի վիճակի և միտումների վերաբերյալ տեղեկությունները հավաքելու և վերլուծելու, ինչպես նաև ոլորտի քաղաքականությունը մշակելու նպատակով Լիազոր մարմինը վարում է մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունների հաշվառման էլեկտրոնային գրանցամատյան, որտեղ նշվում են.

1) լիցենզավորված իրավաբանական անձի անվանումը և գտնվելու (գործունեություն ծավալելու) վայրը.

2) լիցենզիայի համարը.

3) լիցենզիան տալու ամսաթիվը և գրանցման համարը.

4) գործունեության կոնկրետ տեսակը, որի իրականացման համար տրվել է լիցենզիա.

5) տեղեկություններ՝ տրված լիցենզիայի վերաձևակերպման, գործողության կասեցման կամ դադարեցման մասին.

6) կազմակերպությունում իրականացված ստուգումների վերաբերյալ տեղեկություններ.

7) սույն օրենքի 30-րդ հոդվածի ~~3~~ 4-րդ մասով սահմանված հաշվետվությամբ նախատեսված այլ տեղեկություններ:»:

Հոդված 5. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում «օգտագործելու» բառից հետո լրացնել «զրահաբաճկոն, սաղավարտ, արցունքաբեր, գրգռիչ գազով ձեռքի սրվակներ,» բառերը:

Հոդված ~~5~~ 6. Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Պահնորդի (թիկնապահի) առողջությունն ապահովագրվում է գործատուի հաշվին:»:

Հոդված ~~6~~ 7. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 28.1-ին հոդվածով.

«Հոդված 28.1. Մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության գույքային պատասխանատվությունը

1. Մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված գույքային պատասխանատվություն է կրում իր կողմից թույլ տրված խախտման հետևանքով պատճառված իրական վնասի համար:

2. Մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունը պարտավոր է ապահովագրել իր պատասխանատվության ռիսկը ~~նախորդ տարվա ընթացքում մատուցված ծառայությունների համար գանձված վճարի կրկնակիի չափով, բայց ոչ պակաս, քան 10 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը~~:

3 Մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության կողմից իր պատասխանատվության ռիսկի ապահովագրության չափը և ապահովագրության կարգը սահմանվում են Կառավարության որոշմամբ:»:

Հոդված ~~7~~ 8. Օրենքի 30-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «ոստիկանությունը» բառը փոխարինել «Լիազոր մարմինը» բառերով.

2) 2-րդ մասում «Ոստիկանությունը» բառը փոխարինել «Լիազոր մարմինը» բառերով, իսկ «իրավական ակտերով» բառերը՝ «օրենքներով» բառով.

3) 3-րդ մասում «ոստիկանությունն» բառը փոխարինել «Լիազոր մարմինն» բառերով, իսկ «(պատվիրատուների համաձայնությամբ)» բառերը փոխարինել «, բացառությամբ բնակարանների և բնակարանին հավասարեցված վայրերի,» բառերով.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ և 5-րդ մասերով.

«4. ~~Լիցենզավորված մ~~Մասնավոր պահնորդական կազմակերպությունները յուրաքանչյուր կիսամյակ՝ մինչև կիսամյակին հաջորդող ամսվա 25-ը, Լիազոր մարմնին են ներկայացնում կազմակերպության գործունեության վերաբերյալ հաշվետվություն, որի ձևը և դրանում ներառվող տեղեկությունների ցանկը սահմանվում է Լիազոր մարմնի կողմից:

5. Մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից օբյեկտները պահպանելու կարգը և պայմանները սահմանում է Լիազոր մարմինը:»:

Հոդված ~~8~~ 9. Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասում «ոստիկանության» բառը փոխարինել «Լիազոր մարմնի» բառերով:

Հոդված ~~9~~ 10.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի~~, 6-րդ հոդվածով լրացվող 28.1-ին հոդվածի 2-րդ մասի~~ և ~~7~~ 8-րդ հոդվածի 4-րդ կետի, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո և 7-րդ հոդվածով լրացվող 28.1-ին հոդվածի 2-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հուլիսի 1-ից:

2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը լիցենզիաներ ստացած մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունները լիցենզիաները

սույն օրենքի 7-րդ հոդվածով լրացվող 28.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջի մասով մինչև 2026 թվականի օգոստոսի 1-ը, իսկ սույն օրենքով նախատեսված մյուս պահանջների մասով՝ մինչև 2026 թվականի հունվարի 1-ը համապատասխանեցնում են սույն օրենքով նախատեսված պահանջներին: Սույն մասի պահանջները չապահովելու դեպքում լիցենզիաների գործողությունը դադարեցվում է Լիազոր մարմնի կողմից:

~~2~~ 3. Սույն օրենքի 7-րդ հոդվածով լրացվող 28.1-ին հոդվածի 3-րդ մասով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում, իսկ սույն օրենքի ~~7~~ 8-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված ~~իրավական ակտերն~~ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՄԱՍՆԱՎՈՐ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ (Կ-1013-21.02.2025-ՊԱ-011/1) ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Խաչատրյան**	«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ կետ	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում լրացվող 124.8-րդ հոդվածով նախատեսվում է վերացնել	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**

			պահպանվող անձին այլ տրանսպորտային միջոցով ուղեկցելու իրավական հնարավորությունը, ինչի համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում նախատեսվում է նոր զանցանք՝ մասնավոր պահնորդական կազմակերպության կողմից պաշտպանվող անձին փոխադրող տրանսպորտային միջոցը մեկ այլ տրանսպորտային միջոցով ուղեկցելը կամ երեքից ավելի թիկնապահի (այդ թվում՝ վարորդ-թիկնապահի) կողմից ուղեկցելը: Հաշվի առնելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացվող 124.8-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների բարձր վնասակարությունը հանրային անվտանգության տեսանկյունից՝ առաջարկում եմ օրենքով նախատեսել պատասխանատվություն նաև այն դեպքերի համար, երբ նշված հոդվածի 1-ին մասով		

			նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո մեկ տարվա ընթացքում կատարվում է 2 կամ ավելի անգամ: Հաշվի առնելով նշված արարքի հանրային վնասակարության բարձր աստիճանը՝ առաջարկվում է նշված դեպքում, որպես սանկցիա, նախատեսել համապատասխան լիցենզիայի գործողության դադարեցումը:		
2.	**ՀՀ կառավարություն**	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	1. Գործնականում անօրինական պահնորդական ծառայություններ առաջարկելը և դրանք մատուցելը բովանդակային իմաստով չեն համընկնում, ինչը խոչընդոտ է ստեղծում նման ծառայություններ փաստացի մատուցող անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու համար: Ուստի առաջարկում ենք Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.23-րդ հոդվածում, որպես վարչական իրավախախտում, դիտարկել նաև անօրինական պահնորդական	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

			ծառայություններ մատուցելը: 2. Հաշվի առնելով, որ գործնականում անօրինական պահնորդական ծառայություններ կարող են առաջարկվել կամ մատուցվել նաև ֆիզիկական անձանց կողմից, ինչպես նաև՝ անձինք կարող են օգտվել ֆիզիկական անձանց անօրինական պահնորդական ծառայություններից, առաջարկում ենք Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.23-րդ հոդվածի վերնագրում, 1-ին և 2-րդ մասերում կատարել համապատասխան լրացումներ՝ ֆիզիկական անձանց կողմից անօրինական պահնորդական ծառայություններ առաջարկելու, մատուցելու կամ ֆիզիկական անձանց պահնորդական ծառայություններից օգտվելու համար: 3. Հաշվի առնելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.23-րդ հոդվածի		

			1-ին և 2-րդ մասերով նախատեսված իրավախախտումների հանրային բարձր վնասակարությունը՝ առաջարկվում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին կետում «երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի» բառերը փոխարինել «ինը հարյուրապատիկից հազար հարյուրապատիկի» բառերով, 2-րդ կետում «երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի» բառերը փոխարինել «ինը հարյուրապատիկից հազար հարյուրապատիկի» բառերով:		
3.	**ՀՀ կառավարություն**	«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»	Հաշվի առնելով 1-ին կետով ներկայացված առաջարկությունը՝ ինկորպորացիայի խնդիրներից խուսափելու համար առաջարկում ենք «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

		օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետ	կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածում լրացնել 2-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ. «2) 4-րդ մասում «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ Լիազոր մարմին)» բառերը փոխարինել «Լիազոր մարմինը» բառերով.»: Միաժամանակ, առաջարկում ենք վերանայել կետերի համարակալումը:		
4.	**ՀՀ կառավարություն**	«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով լրացվող 8.1-ին հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ	«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 4-րդ հոդվածով նախատեսվող «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» օրենքում (այսուհետ՝ Օրենք) նոր լրացվող 8.1-ին հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի փոխարեն հղում կատարել 4-րդ մասին, քանի որ Նախագծի 7-րդ հոդվածով	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**

			նախատեսվող Օրենքի 30-րդ հոդվածում կատարվող փոփոխությունների և լրացումների կատարման արդյունքում հաշվետվության վերաբերյալ կարգավորումներ նախատեսվելու են Օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ, ոչ թե՝ 3-րդ մասում:		
5.	**ՀՀ կառավարություն**	«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծում լրացվող 5-րդ հոդված	Մասնավոր պահնորդական կազմակերպությունների կողմից իրենց պարտականությունների պատշաճ իրականացման համար առաջանում է նաև մի շարք այլ միջոցներ կիրառելու անհրաժեշտություն: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծում լրացնել 5-րդ հոդված՝ հետևյալ բովանդակությամբ. «**Հոդված 5.** Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում «օգտագործելու» բառից հետո լրացնել «զրահաբաճկոն, սաղավարտ, արցունքաբեր,	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

			գրգռիչ գազով ձեռքի սրվակներ,» բառերը:»: Միաժամանակ առաջարկում ենք Նախագծի տեքստում կատարել համարակալումների և հղումների համապատասխան փոփոխություններ:		
6.	**ՀՀ կառավարություն**	**«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածով լրացվող 28.1-ին հոդվածի 2-րդ մաս, 9-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասեր**	Նախագծի 6-րդ (լրամշակված 7-րդ) հոդվածով լրացվող 28.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության կողմից իր պատասխանատվության ռիսկը ապահովագրելու պարտավորություն՝ սահմանելով միայն դրա չափը: Նշված կարգավորումից բացակայում է ապահովագրության կարգը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության կողմից իր պատասխանատվության ռիսկի ապահովագրության չափը և	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

			ապահովագրության կարգը սահմանել Կառավարության որոշմամբ՝ դրա համար նախատեսելով լիազորող նորմ: Ըստ այդմ առաջարկվում է Նախագծի 6-րդ (լրամշակված 7-րդ) հոդվածով լրացվող 28.1-ին հոդվածի 2-րդ մասի «նախորդ տարվա ընթացքում մատուցված ծառայությունների համար գանձված վճարի կրկնակիի չափով, բայց ոչ պակաս, քան 10 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը» բառերը հանել և լրացնել 3-րդ կետ հետևյալ խմբագրությամբ՝ «3. Մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության կողմից իր պատասխանատվության ռիսկի ապահովագրության չափը և ապահովագրության կարգը սահմանվում են Կառավարության որոշմամբ:» Միաժամանակ, առաջարկում ենք նախագծի անցումային դրույթներով նախատեսել ռիսկի ապահովագրության վերաբերյալ		

			դրույթն ուժի մեջ մտնելու ժամկետ՝ 2026թ. հուլիսի 1-ը, իսկ տվյալ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունելու համար սահմանել եռամսյա ժամկետ՝ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո:		
7.	**ՀՀ կառավարություն**	**«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 4-րդ կետով լրացվող 30-րդ հոդվածում լրացվող 4-րդ մաս**	Նախագծի 7-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսվող Օրենքի 30-րդ հոդվածում նոր լրացվող 4-րդ մասից առաջարկում ենք հանել «Լիցենզավորված» բառը, քանզի մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունները ամեն դեպքում չեն կարող առանց լիցենզիայի գործունեություն իրականացնել և շեշտադրման կարիք չկա:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**
8.	**ՀՀ կառավարություն**	**«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի**	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ առաջարկվում է Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասում նշված «իրավական ակտերն» բառերը փոխարինել «ենթաօրենսդրական նորմատիվ	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**

		նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մաս:	իրավական ակտերն» բառերով:		
9.	**ՀՀ կառավարություն**	**«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մաս:**	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով: Այս կարգավորումից բխում է, որ գործող մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունները պետք է իրենց գործունեությունը համապատասխանեցնեն նոր Նախագծով նախատեսվող և արդեն գործող համարվող օրենսդրական պահանջներին, որոնք ավելի խիստ են, քան այն պահանջները, որոնց գործողության ժամանակ վերջիններս ձեռք էին բերել մասնավոր պահնորդական	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**

			գործունեություն իրականացնելու լիցենզիա: Առաջարկվում է Նախագծի 9-րդ հոդվածով նախատեսվող անցումային դրույթներում նախատեսել նաև կարգավորումներ ներկայումս գործող մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունների վերաբերյալ: Վերջիններիս համար պետք է նախատեսվեն Նախագծով նախատեսվող պահանջներին համապատասխանելու վերաբերյալ կարգավորումներ և ժամկետներ:		
10.	**ՀՀ կառավարություն**	**«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված:**	«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածում սահմանված է օրենքի նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը, որի համաձայն. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրը ներառող ամսվան հաջորդող յոթերորդ ամսվա սկզբից:»: Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 2-րդ	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**

			հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Օրենսգրքով նոր տեսակի հարկի կամ վճարի սահմանում, հարկի կամ Օրենսգրքով սահմանված վճարի դրույքաչափի բարձրացում նախատեսող Հայաստանի Հանրապետության օրենքները կամ Հայաստանի Հանրապետության օրենքների նման դրույթները կարող են ուժի մեջ մտնել այդ օրենքների ընդունման օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա սկզբից, բայց ոչ շուտ, քան այդ օրենքների պաշտոնական հրապարակման օրը ներառող ամսվան հաջորդող յոթերորդ ամսվա սկզբից:»: Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 7-րդ հոդվածում սահմանված են վճարի տեսակները, որի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են՝ 1) պետական վճարներ, որոնց տեսակներն են՝		

			ա. պետական տուրքը, (…)»: Սահմանելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված վճարի չափի բարձրացում, այն է՝ տուրքի դրույքաչափի բարձրացում, օրենքի նախագիծը պետք է ուժի մեջ մտնի օրենքի ընդունման օրը ներառող հարկային տարվան՝ 2025 թվականին, հաջորդող հարկային տարվա՝ 2026 թվականից: Մինչդեռ Նախագծի 2-րդ հոդվածում ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանված է պաշտոնական հրապարակման օրը ներառող ամսվան հաջորդող յոթերորդ ամսվա սկզբից, որը միանշանակ չէ, որ կարող է հանդիսանալ 2026 թվականը: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք վերանայել Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված ժամկետը՝ համապատասխանեցնելով այն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով նախատեսվող համապատասխան		

			դրույթների ուժի մեջ մտնելու վերաբերյալ ընդունելի ժամկետներին:		
11.	**ՀՀ կառավարություն**	**«Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված:**	«Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս նշել օրենքի ճիշտ հերթական համարը՝ «ՀՕ-368»-ի փոխարեն «ՀՕ-368-Ն»:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**
12.	**ՀՀ կառավարություն**	«Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	Հաշվի առնելով «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» և **«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի փոխկապվածությունը,** առաջարկում ենք «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը համապատասխանեցնել	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**

			«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետին:		